ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

3301 ք.Կապան, Գ.Նժդեհի 1, հեռ. Ֆաքս (010) 287830, (0285) 52443, էլ-հասցե՝ syunik@mta.gov.am

"06" փետրվարի 2013թ. № 03/15/533-13

Ձեր 05 փետրվարի 2013թ. № 194-ի 1

"Ինֆորմացիայի ազատության կենտրոն"
հասարակական կազմակերպության
իրավաբան Գևորգ Հայրապետյանին

Հարգելի պարոն Հայրապետյան

Տեղեկատվություն ստանալու վերաբերյալ ՀՀ Սյունիքի մարզպետին ուղղված Ձեր հարցման կապակցությամբ հայտնվում է հետևյալը.

1. ՀՀ Սյունիքի մարզպետարան հասցեագրված բոլոր փաստաթղթերը, անկախ ստացման եղանակից (թղթային թե էլեկտրոնային), մուտքագրվում, հաշվառվում և արխիվացվում են էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության՝ «Mulberry» համակարգի միջոցով, համաձայն ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված գործավարության կարգի պահանջների:
2. Հարցումները (անկախ ստացման եղանակից), «Mulberry» համակարգից բացի, հաշվառվում են նաև առանձին գրանցամատյանում՝ համաձայն «Տեղեկատվության մասին» ՀՀ օրենքի պահանջի, իսկ դիմումները՝ ընդհանուր սկզբունքով, էլեկտրոնային համակարգով:
3. 2012 թվականի ընթացքում Սյունիքի մարզպետարանը ստացել է 26 հարցում, որից էլեկտրոնային՝ 11, 2431 դիմում, որից 7-ը՝ էլեկտրոնային:

Միաժամանակ տեղեկացվում է, որ ստացված բոլոր հարցումներին և դիմումներին, օրենքով սահմանված ժամկետում, տրվել է համապատասխան ընթացք:

Ռ.ՂԱԶԱՐՅԱՆ

Կատարող՝ Ա. Քարամյան
Հեռ. 0285 23573